2. ՔԱՄԱՆԻ

Քամանին ժողովրդական լարային աղեղնավոր նվագարան է, ինչպես քամանչան: Տարածված է Սև ծովի ափերին ապրող Արևմտյան Հայաստանի շրջաններից գաղթած համշենահայերի կենցաղում, ինչպես նաև՝ Մերձավոր Արևելքի երկրներում:

Լինում են մեծ, միջին և փոքր (պիկկոլո) չափերի: Նվագում են ծնկին հենած՝ ուղղաձիգ դիրքում: Նվագում են նաև ուսին դրած, հորիզոնական դիրքում:

Նվագարանն ունի երեք, իսկ ավելի հաճախ՝ չորս մետաղե լար: Բռնում են ձախ ձեռքով, ուղղաձիգ, իսկ աջում՝ աղեղը:

Հայ աշուղների սիրելի նվագարաններից էր (նվագել է Ջիվանին), բայց ներկայումս կենցաղում համեմատաբար սակավ է գործածվում: Քամանիի տարատեսակներն այսօր իրենց հաստատուն տեղն են զբաղեցնում Հայաստանի «Սայաթ-Նովա» աշուղական երգի անսամբլում: